միաք և պարարէին ոսկերք Ցունաց ('ի 18—24—29 Ցունվարի)։

Եւ այսպէս համարձակութիւնն Ցունաց փոխեցաւ յանդգնութիւն. զի նոքա եւս սկսան թշնամանել և նախատել զազգն ըստ բնաբոյս բարուց իւրեանց, կոփէին եւ հարկանէին զմիարանս տաճարին Ս. Յարութեան, և արկանէին զհողս և զքարինս 'ի վերայ գլխոց նոցա։ Տաղտկացեալ միաբանաց 'ի խժդժութենէ ասսի՝ աղաչէին զԹէոդորոս Պատրիարք աղաւել զնոսա 'ի գերութենէ Ցունաց. այլ նա սիրով և հայրաբար յորդորեաց զնոսա համբերութեամբ տանել նախատանաց, և մնալ 'ի տեղիս իւրեանց։

Յայնք 'ի չինութեան Վերնատան և այլ տեղեացն Հայոց՝ փոխեցին և այլայլեցին զձեւ և զկերպարան եկեղեցւոյն, և ոչ թողին տեղի խորանի և այլ կարեւոր իրաց, որպէս էրն յառաջագոյն՝ և ոչ չինեցին զսենեակս միաբանաց. խափանեցին զուղղութիւնս սեղանն եդեալ մոյթ յաղթ և ատուար առաջի նորա, զի մի պատարագեսցեն անդ Հայք. նոյնպէս և յայլ տեղիս, մինչ զի չճանաչել թէ իցեն սոքա վիճակք Հայոց։ Արգելին և զխաչինս 'ի պատարագելոյ 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի. զի նախ խոստացան թոյլ տալ զկնի թափօրի նոցին, այլ յետոյ ժխտեալ ընդդէմ կացին հակառակութեամբ և 'ի ձեռն Խոճաքեանին գրել եւուն Հէօճէթ, որպէս թէ Տէրութիւնն տուեալ ինչ Ցունաց զրովանդակ տեղիս տաճարին Ս. Յարութեան. եւ իբրեւ հանին զայն 'ի դատաստան սակս հաստատութեան, ոչ ընկալաւ զայն Միւֆթի քաղաքին. եւ զկնի մահուան նորին՝ վերստին հանին զայն դիր յատեան և եւուն կնքել դատաւորին, այլ նոր Միւֆթին և Նախիպն տհաճութիւն ցուցեալ առ այն ոչ կամեցան հաստատել։ եւ այնպէս խնդիրն մնաց թերի. զի մտադիր էր Խոճաքեանն ձեռամբ իւրով յանձնել զտեղիս Ցունաց ('ի 1—17 Մարտի)։

Թէոդորոս Պատրիարք յառաջագոյն խնդրեալ էր 'ի Կաւսակալէն Դամասկոսի բառնալ զհակառակութիւնս Ցունաց վասն Գերեզմանի Ս. Աստուածածնի և վասն պատկերաց և կանթեղաց Ս. Յարութեան. և նա գրեաց առ դատա-